

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 36/6

ք.Երևան

26 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 16.03.2018թ. N3100018 ակտի դեմ «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

18.02.2018թ. թիվ 3100018 հանձնարարագրի շրջանակներում ՀՀ ԿԱ ՊԵԿ Օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների կողմից «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ Ընկերություն) իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունման օրենքով սահմանված կարգով ձևակերպելու և աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ու ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ելակետային տվյալների ճշտության ստուգում, որի արդյունքում 16.03.2018թ. կազմվել է թիվ 3100018 ստուգման ակտը (այսուհետ նաև՝ Ակտ): Ակտով Ընկերությանն առաջադրվել է տուգանք 60.000 ՀՀ դրամի չափով համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև 156000 ՀՀ դրամ արտոնագրային հարկ և 78000 ՀՀ դրամ տուգանք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի, 275-րդ հոդվածի 1-ին մասի, 276-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 2-րդ մասի 3-րդ կետի, 277-րդ հոդվածի 1-ին մասի և 420-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով:

Ակտով արձանագրվել է, որ ընկերությունը 2018թ. մարտ ամսին ներկայացված արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության մեջ չի ներառել 3622L, 3621L, 3623L և 3620L պետհամարանիշի միկրոավտոբուսների վերաբերյալ տվյալներ, որի հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 276-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 2-րդ մասի 3-րդ կետի և 277-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հաշվարկվել է 124800 դրամ լրացուցիչ գանձման ենթակա արտոնագրային հարկ և ՀՀ հարկային օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասով՝ 62400 դրամ տուգանք: Սակայն ընկերությունը 2018թ. մարտ անսվա ներկայացրած արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության մեջ 3622L, 3621L, 3623L և 3620L պետհամարանիշի միկրոավտոբուսների փոխարեն սխալմամբ հայտարարագրել է 3222L, 3221L, 3223L և 3220L պետհամարանիշի միկրոավտոբուսներ, որոնք պատկանում են այլ կազմակերպության: Այդ մասին ընկերությունը 06.03.2018թ. թիվ NԳՏ 08 գրությամբ տեղեկացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ սպասարկման թիվ 10 բաժին: 28.04.2018թ. N539 պատասխան գրությամբ ընկերությանը տեղեկացվել է, որ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում ավտոտրանսպորտային միջոցի սխալ

լրացված համարանիշի ուղղման հնարավորություն նախատեսված չէ և 08.02.2018թ. ՀՕ-124-Ն օրենքով կատարված փոփոխությունների համաձայն ընկերության հարկային պարտավորությունների վերահաշվարկման ժամանակ կուղղվեն նաև սխալ լրացված պետհամարանիշները:

Հարկ է նշել, որ 2018թ. մարտ ամսվա համար ներկայացված արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության մեջ որպես ելակետային մեծություն վերցված է 14 միկրոավտոբուս, ներառյալ պետհամարանիշների սխալմամբ ներկայացվածները:

Ելնելով վերոնշյալից՝ Ակտում արձանագրված փաստը, որ ընկերությունը պետք է լրացուցիչ մուծի 124800 դրամ արտոնագրային հարկ և 62400 դրամ տուգանք, սխալ է:

Միաժամանակ, հանաձայն 08.02.2018թ. ՀՕ-124-Ն օրենքի 2018թ. մարտ ամսվա ներկայացված արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության մեջ չներկայացված 0345Լ պետհամարանիշի միկրոավտոբուսի համար ընկերությունը պետք է լրացուցիչ արտոնագրային հարկ վճարի 14950 դրամ ակտում հաշվարկված 31200 դրամի դիմաց և տուգանք 7475 դրամ, ակտում հաշվարկված 15600 դրամի դիմաց:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ 16.03.2018թ. կազմված N3100018 ակտով առաջադրված 141050 դրամ արտոնագրային հարկը և 70525 դրամ տուգանքն անվավեր ճանաչել:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 19.02.2018թ. N3100018 հանձնարարագրի համաձայն «ԳԱՎԱՌՏՐԱՆՆԱ» ՍՊԸ-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու, ինչպես նաև ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 16.03.2018թ. N3100018 ակտը:

Ընկերության բողոքը վերաբերվում է Ակտի 2-րդ կետով առաջադրված պարտավորությանը:

Այսպես, Ակտի 2-րդ կետով արձանագրվել է, որ ստուգման պահին ընկերության կողմից հարկային մարմին 2018թ. մարտ ամսվա համար ներկայացված արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության մեջ ներառված չէր փաստացի ներմարզային ուղևորափոխադրում իրականացնող 13 նստատեղ ունեցող 5 հատ՝ 0345Լ, 3622Լ, 3621Լ, 3623, 3620Լ պետհամարանիշների միկրոավտոբուսների վերաբերյալ տվյալներ:

Ընկերության կողմից խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի, 275-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 276-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 2-րդ մասի 3-րդ կետի, 277-րդ հոդվածի 1-ին մասի և 420-րդ հոդվածի 1-ին մասի, 401-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներն արտոնագրային հարկի գծով լրացուցիչ վճարման է առաջադրվել 234.702 դրամ:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտոնագրային հարկ վճարող են համարվում Օրենսգրքի 276-րդ հոդվածով սահմանված՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակը (տեսակները) իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝ հաշվի առնելով նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված առանձնահատկությունները:

Օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը արտոնագրային հարկ վճարող համարվելու նպատակով մինչև գործունեություն իրականացնելու օրվան նախորդող օրը՝ անկախ այդ օրվա աշխատանքային կամ ոչ աշխատանքային օր լինելու հանգամանքից, Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերությունը 2018թ. մարտ ամսվա համար ներկայացված արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության մեջ թյուրիմացաբար 3622L, 3621L, 3623L և 3620L պետհամարանիշի միկրոավտոբուսների փոխարեն սխալմամբ հայտարարագրել է 3222L, 3221L, 3223L և 3220L պետհամարանիշի միկրոավտոբուսները, որոնք փաստացի պատկանում են այլ կազմակերպության: Այդ մասին ընկերությունը 06.03.2018թ. թիվ NԳՏ 08 գրությամբ տեղեկացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍԿ սպասարկման թիվ 10 բաժին:

Ընդ որում հարկ է նշել, որ ընկերության կողմից 2018թ. մարտ ամսվա համար ներկայացված արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությամբ արտացոլվել են թվով 14 միկրոավտոբուսների վերաբերյալ տվյալներ և սահմանված կարգով վճարվել է դրանց մասով հաշվարկված հարկային պարտավորությունները:

Ակտում արձանագրվել է, որ 2018թ. մարտ ամսվա համար ներկայացված արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության մեջ ներառված չէր փաստացի ներմարզային ուղևորափոխադրում իրականացնող 13 նստատեղ ունեցող 5 հատ՝ 0345L, 3622L, 3621L, 3623, 3620L պետհամարանիշների միկրոավտոբուսների վերաբերյալ տվյալներ:

Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ 2018թ. մարտ ամսվա համար ներկայացված արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության մեջ թյուրիմացաբար ներառված թվով 4՝ 3222L, 3221L, 3223L և 3220L պետհամարանիշների միկրոավտոբուսների ընկերության կողմից փաստացի շահագործված լինելու հանգամանքը ստուգման ընթացքում չի ապացուցվել (ինչն ընդունեցին նաև ստուգումն իրականացրած անձինք), այն դեպքում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ակտով վերը նշված թվով 4՝ միկրոավտոբուսների մասով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները ենթակա են նվազեցման:

Միևնույն ժամանակ, ենթակա են նաև վերանայման 0345L պետհամարանիշի միկրոավտոբուսի գծով հաշվարկված պարտավորությունները, հիմք՝ 17.03.2018թ. ուժի մեջ մտած 08.02.2018թ. ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին ՀՕ-124-Ն օրենքը, որի գործողությունները տարածվում են 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ դիմում-բողոքը բավարարել՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 16.03.2018թ. N3100018 ակտի 2-րդ կետից նվազեցնել ընդամենը 212.210 դրամ, այդ թվում՝ արտոնագրային հարկ 141.050 դրամ, տուգանք 70.525 դրամ, տույժ 635 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ